

Եթե այբբենական ձևագրերը մեզ հասել են XVII—XVIII դարերից և այդ արվեստի մասին հնագույն հիշատակությունը հայկական մատենագրության մեջ XIII դարից է, ապա Գլխում գտնված այբբենի սրվակները X—XI դարերին են պատկանում: Եվ եթե նկատի ունենանք ուղղանթների դարգացած վիճակը, պետք է ենթադրենք, որ այբբենի Հայաստանում լայն տարածում է ունեցել, նրա արտագրությունը առևտրի մեջ զգալի դեր է խաղացել դեռևս XIII դարից առաջ: Ուստի սխալ է այն տեսակետը, թե այբբենի առաջ է եկել XIII դարում: Ըստ մեր ձեռքի տակ եղած օվջալների, որոնք այստեղ հիշատակեցինք, այն գոյություն է ունեցել շատ ավելի վաղ շրջանում:

Հ. ԶԱՆՓՈՒԱԳՅԱՆ

ՄԻՋՆԱԳԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՂԱԳՐՈՒԹՅԱՆ ՆՈՐԱՀԱՅՏ ՄԻ ՍԻՍՏԵՄ

Սղագրության մեզ հասած հնագույն օրինակները վիճաբիր արձանագրություններն են, որոնց հաջորդում են տարբեր ձևերով համառոտագրված ձևագրերը: Հայաստանում սղագրությունը առանձնապես մեծ զարգացում է ապրում սկսած XVI—XVII դարերից: Համառոտագրման հախ-կին ձևերն այլևս չլին րավարարում: Պահանջ է առաջանում ստեղծել գրության արագ ձևի համ-ընդհանուր կիրառման մի այնպիսի ամբողջական սխեմա, որի օգնությամբ հնարավոր լինեք կարճ ժամանակում շատ արտագրել, մի քանի գրքերի նյութը մեկ գրքի մեջ տեղավորել և թղթալուծ կարդալով, զրազումս իմանալ:

Հայերենի սղագրական այդպիսի մի սխեմա ստեղծվել է 1628 թ., այսինքն, անգլիացի Ուիլիսի սխեմայից բնդամենը 26 տարի հետո և ֆրանսիացի Կոսսարի սխեմայից 23 տարի առաջ:

Այն մեզ է հասել ձևագիր վիճակում, ամբողջական է, բացառությամբ հիշատակարանի երեք թերթիկներից, որոնք ձևագրից կտրված հանված են: Հիշատակարանից պահպանված է մի քանի տող, որտեղ և հիշվում է հեղինակի անունը. «... և հայրը և եղբայրը. որը հանդիպիք գրոյս կարդալով կամ օրինակելով լի բերանով ողորմի ասացեք գծողի սորայ անարժան նա-զարին և աստուած ձեզ ողորմեսցի, ամէնա՛ւ: Զեռագրի մեծությունը 14,5 X 9,5 սմ է, գրու-թյունը՝ նոտրգիր, բաղկացած է 326 թղթի թերթերից: Սկզբից և վերջից ունի 2-ական մաշա-ղաթյա պահպանակներ՝ բոլորածե երկաթագրով: Զեռագրի վրա կան հիշատակագրություններ. մեկը՝ ոմն Համթեցի Մարտիրոս վարդապետի (1715 թ.) և մյուսը՝ Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատյանցի (1886 թ. գրված): Ամբողջ ձևագիրը սղագրության հեղինակի ինքնագիրն է: Այդ մասին են վկայում և՛ միևնույն ոճը, և՛ հեղինակի կողմից առաջադրվող սղագրական մե-ծողի ճշգրիտ կիրառումը, ինչպես նաև ձևագրում արտահայտված հեղինակի որոշ մտքերը: Նա-վախ է հայտնում, որ հետագա արտագրողները կարող են աղավաղել գրչության արվեստի այդ գեղեցիկ գործը և դրանից բխող թերությունները վերադարձնել իրեն. «... հ, թլ որպիսի ապականէն տկարագրիչը զարուեստս դայս և դիցեն պատճառս ի վերա թարգմանողին. ո՛հ, ո՛հ...»¹: Զե-ռագրում հեղինակի կողմից տրված է ոչ միայն սղագրության իր սխեմայի տեսական բացա-տրությունը ամփոփված առաջարանի յոթ թերթերում, այլև գործնականում այն կիրառված է, որը և հնարավորություն է ընձեռում կոնկրետ կերպով նկատելու դրա հարմարավետությունը:

Գրչության վայրը ստույգ հայտնի չէ, գրված է հավանաբար Բաղնշին մոտակա որևէ վան-քում: Հեղինակը ձևագրի 272-րդ էջում խոսելով հայոց թվականի ստացման մասին (որտեղից և պարզվում է ձևագրի գրության ճիշտ թվականը), հիշատակում է իր ժամանակակից երկու վարդապետների՝ Ներսեսի և Խաչատուրի անունները, որոնք այդ հարցով զրազվելիս ճշտել են իրենց ապրած թվականը, որը «... ոչ է ՌՀԸ (1078) (մեր թվականության 1629) այլ ՌՀԷ (1077) (մեր թվականության 1628)»²... Եթէ ասեք զայս ով խնդրեաց. Ներսես վարդապետն խնդրեց շահասա իւր փափաքանացն, մինչև Խաչատուր վարդապետն ուզեց. աստուծոյ կարո-ղութեամբ եղբարց աղօթիւքն գտաւ, զմեզ ուրախացուց. աստուած ողորմի ասացէք»³:

Հայտնի է, որ Բաղնշի դպրոցի այդ ժամանակաշրջանի ականավոր ներկայացուցիչներից են եղել Ներսես և Խաչատուր վարդապետները, որոնք շատ հավանական է, որ զրազված լինեին

1 Մ. Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ Մատենադարան) ձեռ. № 1465, էջ 300ր»

2 Նույն տեղում, էջ 12ր:

3 Նույն տեղում, էջ 272ր:

4 Նույն տեղում, էջ 274ր:

հայոց թվականի ճշտման հարցով: Բնական է, որ գրչության այսպիսի աշխույժ կենտրոնում գրչության նման սխտեմի պահանջ առաջանար:

Սղազրական այս սխտեմի հեղինակի կենսագրության վերաբերյալ տեղեկությունները, դժբախտաբար, շատ քիչ են: Առաջարկում պահպանված որոշ տվյալներից և առաջադրված սղազրական սխտեմից զաղափար ենք կազմում հեղինակի ունակությունների և իմացականության մասին՝ գրչության արվեստի և քերականական գիտելիքների բնագավառում: Առաջադրելով իր սխտեմը, հեղինակը նախապես ուսումնասիրել է ինչպես հայ, այնպես էլ օտար, միսլ իր ժամանակը գոյություն ունեցող համառոտագրման ձևերը, հասկացել է սղազրության արժեքն ու օղտակարությունը և գնահատել է այն՝ որպես «կատարեալ արուեստ»: Առաջարկում նազար սղազիրը գրում է, որ ձեռագրի վրա աշխատել է 9 ամիս, ծերության հասակում և հիվանդ վիճակում՝ կրելով բազում շարշարանքներ. «Իսկ զնեղութիւն և զվիշտքն զոր ես կրեցի ի թարգմանութիւն սորա, աստուած գիտէ, որ քննէ զգաղտնիս մարդկան, և նմա փառք յաւիտեանս յաւիտեանից, ամէն»⁵: Ինչպես երևում է, հեղինակը իր կենդանության ժամանակ որոշ առարկությունների է հանդիպել, եղել են մարդիկ, որոնք չըմբռնելով սղազրության նշանակությունը, մեղադրել են, առելով թե՛ «...վասն որոյ արարեալ են զսա, զի մեք դիրս ունիմք, և ա յ ոչ է պիտոյ մեզ գիր...»⁶, և դժվարություններ ստեղծելով, նրան պատճառել են բավական «նեղութիւն և վիշտք»⁷: Հեղինակը, սակայն, չնայած իր տկարությանը, հաստատակամությամբ ավարտել է ձեռնարկած գործը. «Ժանուցումն լիցի ձեզ, ո՛վ սիրելիք, զի յոյժ աշխատեցաք ի թարգմանութիւն սորա. զի ի մտաց տկար էի. բայց հաստատուն ունէի զուսս առ աստուած, որ հրամայեաց, թէ զարութիւն իմ ի տկարութիւն ձեր կատարի. և ազնականութեամբն աստուծոյ աւարտեցի կատարեալ արուեստիւ»⁸: Սղազրությունը շրջադրություններին նա պատասխանում է. «Ժանիր, ով սիրելի, ոչ թէ՛ վասն քո գրեցաւ գիրս այս. և ոչ որ հաբկ եղեալ է ի վերա քո, թէ ալտ է քեզ զսա ընթեռնուլ կամ ուսանիլ, այլ որոց պիտոյ լինի... բայց գիտելի է, զի բազում յօժարութիւն պիտոյ է սմա և կատարեալ ուսանիլ, զի մի ամօթ կրեսցէ ի կարգալն իւրում»⁹: «Վասն զի սա է իմաստասիրացն իմանալի և տկարացն պարսաւելի. ծանօթք զի պարտ է փոխարեն արսաւելոյ՝ փառս մատուցանել աստուծոյ»¹⁰: Առաջադրելով իր սխտեմը, հեղինակը անմիջական նպատակ է ունեցել օգնել հատկապես գիտությանը զրազվեղներին՝ տեղ և ժամանակ տնտեսելու: Այդ կապակցությամբ նա գրում է. «Դարձեալ գիտելի է, զի զայսպիսի նշանագիրս վասն վարդապետական կտակարանացն արարեալ են զսա, զի կարող է գիրս այս զն (5) և զՅ (6) դրբի բռնն ի մի փոքրիկ գիրք հաւարել...»¹¹: Սղազրական այս սխտեմի ստեղծումը ձկայում է հեղինակի մտքի մեծ կարողության, համառ աշխատանքի, հաստատակամության, համբերության և սուր հիշողության մասին:

Քննարկվող ձեռագիրը գրավել է միայն մեծանուն հայագետ Հրաչյա Աճառյանի ուշադրությունը. իր «Հայոց գրերը» աշխատության մեջ նա գնահատել է սղազրական այդ սխտեմը որպես «...հայ հեղինակի մը հնարած բավական ճարտարամիտ սղազրական մեկ դրությունը»¹²: Աճառյանը նպատակ է ունեցել հետազայում ավելի մանրամասն խոսել դրա մասին, որը դժբախտաբար ինչ-ինչ պատճառներով չի իրագործել:

Նազար սղազրի աշխատությունը բաղկացած է երկու մասից՝ տեսական և գործնական: Տեսական մասում շաբաղրված են այն սկզբունքներն ու կանոնները, որոնցով սղվելու են բառերը, իսկ գործնականում տարրեր օրինակներով ցույց է տրված սղազրության նպատակը. ապացուցված են նրա կիրառման առավելությունները՝ մինչ այդ եղած կրճատման ձևերի համեմատությամբ:

Իր սղազրական սխտեմը մշակելիս հեղինակը առաջնորդվել է երեք հիմնական սկզբունքներով:

1. Սղազրական նշանների ընտրություն, 2. բառի համառոտագրում, 3. բառի փոխարինումը սղազրական նշանով:

5 Նույն տեղում, էջ 12ր:

6 Նույն տեղում, էջ 7ա:

7 Նույն տեղում, էջ 10ր:

8 Նույն տեղում, էջ 7ա:

9 Նույն տեղում, էջ 10ա:

10 Նույն տեղում, էջ 10ր:

11 Հ. Աճառյան, Հայոց գրերը, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1910. հունիս, էջ 123:

Քննարկենք Նազարի սղագրության սխտեմը նույն այս հերթականությամբ: Բառերի համառոտագրությունը ընդհանուր առմամբ իրագործվում է երկու եղանակներով՝ արագագրությամբ (տախտգրաֆիա) և սղագրությամբ (ստենոգրաֆիա):

Համառոտագրության արվեստի կատարյալ ձևն ստացվում է այս երկուսի միացումով, որը և ընկած է հայ սղագրի սխտեմի հիմքում: Իր կրճատման ձևով այս սխտեմը սղագրության հնչյունային տեսակն է, իսկ ըստ նշանների ընտրության՝ պատկանում է սղագրության երկրաչափական խմբին:

Այստեղ սղագրական նշանները հասարակ են, պարզ, գրվում են ազատ, առանց դժվարության. կազմված են բացառապես կետից, կիսաշրջանից և ուղիղ գծից՝ թեքված տարրեր ուղղություններով: Առաջնորդվելով այն մտքով, որ նշանների պարզությունն ու սակավությունը հեշտացնում են դրանք հիշելը և ավելի ճկուն դարձնում սղագրական սխտեմը, Նազար սղագիրը հայկական այբուբենի տառերի և շուրջ հազար բառերի սղագրման համար ստեղծել է նշանների մոտ տասը ձև.

— — — — — / ʃ ʊ օ ✓ ~ .

Որպես հիմք ընդունելով այդ ձևերը, ստացել է նշանների մոտ երեսուն տեսակ.

— — — — —
✓ ʃ ʊ / ʃ ʃ ✓ . | |
~ ʃ օ ʊ օ ւ ւ ւ ւ ւ
~ ~ ~ ~ ~ ~ . .

Նազարի սղագրական նշանները ըստ իրենց մեծության բաժանվում են երեք խմբի՝ մեծ, միջակ և փոքր:

Մեծ են այն նշանները, որոնք գրվում են տառի կողքից և սկսվելով միջնական գծից հասնում են վերնականին, կամ հակառակը՝ սկսվելով վերնականից, իջնում են մինչև միջնական գիծը.

✓ ʃ ʃ /

Միջակ են այն նշանները, որոնք գրվում են ուղիղ վիճակում, գրավելով երկու տողերի միջև ընկած տարածությունը.

օ ʊ օ ւ ւ օ ւ ʃ ✓ ւ ւ ւ . | |

Փոքր են այն նշանները, որոնք գրվում են տառերի վրա, պառկած վիճակում.

— — — — — . .

Նա փորձել է բառին փոխարինող նշանն ստեղծել բառի սկզբնատառի ձևից: Այդ փորձը մեզ հիշեցնում է սղագրության գիշարային ձևը. այսպես՝ ա-ով սկսվող բառերի համար օդ-տագործել է — նշանը, այսինքն ա-ն պառկած վիճակում: Ա-ի համար ընտրված այդ նշանը փոխադրված է մյուս նշանների հետ միասին, որը բարդացնելով գրությունը, դժվարացնում է արագ գրելը (հասկանալով այդ, հետագայում հեղինակը հրաժարվել է այդ ձևից):

Ինչպես տառին, այնպես էլ բառին փոխարինող նույնանման նշանը, տառի վերևում կամ ներքևում գրվելով, արտահայտում է տարբեր իմաստ: Այսպես, օրինակ.

ր — բանաւոր
րօ — բեկումն

ե — եկեսցէ
ե — եկեալ

ե — եղրալր
ե — երգ

’օ — աւղ
օ — աւծ

Նույն դժի երկար ու հաստ տեսակը այլ իմաստ է արտահայտում, բարակ և կարճ տեսակը այլ՝ Օրինակ.

դ—դասառասան	դ—դասաւոր	բ—բարեկամ	բ—բազում
դ—դատապարտ	դ—դուռն	բ—բանասերկու	բ—բամբաս

Նշանները տառերի վրա դասավորելիս սղագիրը առաջնորդվել է հայերեն տառերի արտաքին ձևով, քանի որ, ինչպես ինքն է ասում, «Ֆոնետիկա... հարմարաւոր է դամենայն պատիւի վերա մենայն դրի բանեցնել. և մերն ոմն հաւասար և ոմն երկայն. նթլ երկու գիր երկայն լինի, մինն ի վերին առգլն և միւսն ի ներքին տողն, յորժամ գեղջիւր ի վեր պատիւն գիցես ի ներքո վերին դրին, այլ տկարագոյնը ոչ կարեն իմանալ թլ պատիւս այս վերին դրին իցէ, թէ ներքինս»¹²։ Այսպէս, ամբողջական տառերի համար ընտրել է մեծ և փոքր նշանները, միջակ մեծութեան նշաններից շակերտի նման նշանը դրել է միջնական և վերնական գրերի վրա, իսկ պակած դրութեամբ այդ նույն նշանը օգտագործել է արդեն բոլոր տառերի համար։ Սղագրի մոտ ձայնավորների և բաղաձայնների նշանները իրարից տարբերվում են։ Ձայնավոր ա-ին փոխարինում է երկրաշափական կետը, ե-ին երկու շեշտը, ի ձայնավորին՝ շեշտը։ Ձայնավորների նշանները բաղաձայնի վրա դրվելիս արտահայտում են սղված ձայնավորի իմաստ, մինչդեռ բառարանում ձայնավորի վրա դրվելիս, արտահայտում են ամբողջական բառի իմաստ (այգ մասին ավելի մանրամասն կիսովի ստորև)։

Տեսական մասի վերջում բերված սղագրական րոտարանից պարզ է դառնում, որ մեր հեղինակը տառերի վրա դրվելիք նշանների ընտրութեան հարցում շատ նորանկատ է եղել և ձգտել է դյուրացնել սղագրական իր սխառնմի օգտագործումը։

* *

Սղագրական այս սխառնմի ամենակարևոր բաժինը վերաբերում է բառի համառոտագրութեանը։ Համառոտագրումը կատարելիս, սղագրութեան հեղինակը հենվել է հիմնականում բառի ձայնական հատկութեանների և բաղաձայնութեան վրա։ Կրճատման այս ձևը, առանձնապես ձայնավորների սղումը, լայն կիրառում էր ստացել հայ միջնադարյան գրիչների մոտ։ Սղված ձայնավորների փոխարեն դրվում էր պայմանական մի նշան, երբեմն էլ սղումը կատարվում էր առանց որևէ նշանի։ Նազար սղագիրը, իր նախորդների ստեղծած սղագրական ձևերին գիտակ լինելով և շատ լավ հասկանալով դրանց դրական և բացասական կողմերը, գտնում է, որ նույնիսկ միայն ձայնավորների սղումը խիստ շահավետ է տեղի և ժամանակի առումով, բայց անհրաժեշտ է, որ այդտեղ մտցվի պարզորոշութեանը և նվ իր սխառնմում, կրճատելով ձայնավորները, երկրարբաններն ու բառային մի շարք վերջավորութեաններ, նա դրանցից յուրաքանչյուրի համար ստեղծել է համապատասխան նշան։

Հայոց այբուբենի տառերն ըստ իրենց ձայնական հատկութեանների նա բաժանել է ձայնավորների, բաղաձայնների և երկրարբանների։

Ձայնավորներն են՝ ա, ե, է, ը, ի, հ, յ, ու. սրանք ըստ հեղինակի «անմարմին են և ի կոկորդէ խօսին և ոչ ի լեզու»¹³։

Բաղաձայններն են՝ ր, գ, զ, զ, թ, ժ, լ, խ, ծ, կ, դ, ճ, մ, ն, շ, չ, պ, ջ, ու, ս, վ, տ, ք, ց, ւ, փ, ք։

Երկրարբաններն են, այլ։

Հեղինակը միայն ա, ե, ի ձայնավորների համար է ստեղծել սղագրական հատուկ նշաններ՝ ա-ւ, ե-ւ, ի-ւ։ Ընտրել է այդ երեք ձայնավորները, որովհետև մյուսների հետ համեմատած դրանք ավելի շատ են հանդիպում գրութեան մեջ։ Երեքն այստեղ հեղինակի բացատրութեանը. «Դարձեալ գիտելի է, զի ամենայն գիր իւրմովն կապլ զրանն. բայց այրն համարձակ է ի վերա ամենայն դրի, ահա ցուցանլ աստ քեզ՝ դարական, զանազան։ Ահա այս իւրմովն է, լաւ իմացիր։ Դարձեալ տես զսա. ազնիւ, ազատ, ազգք. ահա այս է այրի համարձակութիւնը։ Այս մի գրովս ծանիր և պալլս»¹⁴։

Ձայնավորներին փոխարինող սղագրական նշանները՝ կետը, շեշտը և երկշեշտը, բաղաձայնի վերևում դրվելիս կազմում են երկտառանի վանկ, որը սկսվում է սղված ձայնավորով և վերջանում այդ բաղաձայնով։ Այսպես սրինակ.

¹² Մատենադարան, ձեռ. N° 1165, էջ 12ա։

¹³ Նույն տեղում, էջ 7բ։

¹⁴ Նույն տեղում, էջ 9բ։

ն — աճ	ր — ար	ղ — աղ
ն" — ևն	ր" — ևր	ս' — ևս
ն' — ին	ր' — իր	ս' — իս

Օրինակներ բառերի.

ն՝ձ — աճձ, հ՝մ՝ր — համար, ծ"ր — ծեր, դ՝ր — դիր

Բաղաձայնի ներքևում գրվելիս՝ կետը, շեշտը և երկշեշտը երկտառանի վանկի սկզբին ավելացնում են նույն բաղաձայնը կազմվում է բաղաձայնից, սղված ձայնավորից և դարձյալ նույն բաղաձայնից եռտառանի վանկ. օրինակ՝

ն — նան	թ — թաթ	տ — տատ
ն" — նևն	ս" — սևս	տ" — տևտ
ն' — նին	ս' — սիս	ր' — րիր

Օրինակներ բառերի.

լ — լալ, դն — դնան, ք" — քնքն, աս" — ասևս, դր — դադար

Երկտառանի վանկի կրկնման դեպքում կրկնապատկվում է և նշանների քանակը՝ Վերջին ներս դրվելով նույն բաղաձայնի վրա առաջացնում են համապատասխան վանկեր.

ն — աճան, ր — արար, դ — աղաղ, "ր" — երեր

Այսպիսով, բառերի մեջ եղած մեկից ավելի նույն կամ տարրեր ձայնավոր և բաղաձայն տառերին փոխարինում են ձայնավոր տառերի քանակին հավասար նշաններով Այդ նշանների միացման կամ կրկնման հետևանքով մեկ տառի վրա կարող է լինել մեկից ավելի կետ կամ գիծ.

Բառի մեջ մեկից ավելի նույն ձայնավորի սղման օրինակներ.

չր — չարարար	դկ — աղաղակ	րն — բանան
րծ — արարած	խղ — խաղաղ	րք — արարք

Բառի մեջ տարրեր ձայնավորների սղման օրինակներ.

հլծ"ց ն — հալածեցին	ր'չ — արարիչ	ր"ր — բարերար
հ"ծ"նց — հեծեծանաց	ծ'ն — ծնանին	ր'ր — բերիր

Ինչպես տեսնում ենք, նույնիսկ ամենակարճ բառում շահվում է երեքից-չորս տառ և ձայնավորներին փոխարինող այս նշանները միայն բաղաձայնների վրա դրվելիս են նշանակում ձայնավորների սղում, մինչդեռ ձայնավորների վրա դրվելիս, փոխարինում են այդ ձայնավորով սկսվող բառերին՝ Օրինակ՝

հւումք — հաւատամք	ա — արքալ	ր — ընդ
պհ"սց"ս — պահեսցես	և" — երգելով	և — երրորդ
կ'րկր լ — կերակրիլ	"ի — իբրև	ո — ոչ
կ"նց — կենաց	'լ — լալտենաց	է՝ — էին

Ա և ի ձայնավորների սղումը կատարվում է որոշ վերապահումներով՝ Ոչ բոլոր դեպքերում է, որ այս ձայնավորները սղվում են։ Ա ձայնավորը չի սղվում՝ բառի վերջում, բայի հրամայական եղանակում (օրինակ՝ գնա , արա , սա ր), ցուցական դերանունների դեպքում (սա , դա , նա և այլն), չի սղվում նաև բառի արմատներն իրար կապող հոդակապ ա-ն։

Ի ձայնավորը չի սղվում, երբ գրվում է բառի սկզբում կամ վերջում, երբ հանդիսանում է բայական վերջավորություն (արարի , բերի , սվի), կամ օգտագործվում է որպես նախդիր (ի քան , ի տուն , ի գործ)։

Սղադրական եղանակներ են մշակված նաև երկրարժանների համար: Սա երկրարժանին փոխարինում է բաղաձայնների վրա դրված պարույկը՝: Բառարանում ձայնավորների վրա դրվելիս այս նշանը փոխարինում է բառերին: Այսպես, օրինակ՝

Լ - եււլ	ո - ուսւյ	ւր"լ - ւրրեւտւ
է - եււն	ի - իւրեււն	հւլ - հւսւտւ
ր - եւր	յ - յիշեւ	յուլրկլ - յուղարկեւլ

Այ երկրարժան փոխարինում է \ / նշանը, դրվելով միայն լ, ն, ս, ր, ց, տ տառերի վրա: Սրանց միացությունից առաջացած բառերը իրենց տեղն են գտել սղագրական բառարանում: Դրանք են՝

լ - ալլ	ւ - ալս	ց - ալց
է - ալն	ր - ալր	տ - ալտ

Մնացած տառերի վրա գրվելիս այս նշանը արտահայտում է բոլորովին այլ իմաստ:

Նազար սղագիրը հասկանալով վերջավորությունների սղման անհրաժեշտությունն ու օգտակարությունը և միևնույն ժամանակ մինչ այդ եղած ձևերի անհարմարությունը («թին» վերջավորությունը և նրա փոփոխված բոլոր ձևերը կրճատվելով, փոխարինվում էին համառոտագրման մեկ ընդհանուր նշանով), «ութին» վերջավորություն ունեցող բառերի հոլովական ձևերից յուրաքանչյուրին տվել է իր առանձին սղագրական նշանը.

Վ - ուււււււ	հնդրւՎ - հււււււււււււււււււ
Վ - ուււււււ	բրՎ - բււււււււււււււ
Վ - ուււււււււ	գտՎ - գիււււււււււււ
Վ - ուււււււււ	տւՎ - տւււււււււււ
Վ - ուււււււււ	բրՎ - բււււււււււււ
Վ - ուււււււււ	յրՎ - յււււււււււււ

Հեղինակի ուսադրությունից չի վրիպել և թվական նշանակությամբ գործածվող տառանշանների գրությունը: Ձեռագրերում կիրառվող և բոլորին շատ լավ ծանոթ դրա նշանները՝ միջակետերը և պատվի նշանը նազար սղագրի մոտ նույնպես հանդիպում են, սակայն վերջինիս մոտ խիստ կերպով ընդդժված է դրանց տեղադրման տարբերությունը: Սղագրական նշանները գրվում են տողից վերև, կամ ներքև, մինչդեռ թվական նշանակությամբ տառերի միջակետերը գրվում են տողի վրա, տառերի երկու կողմերում և վրան դրվում է պատվի նշանը:

* *

Սղագրական բառապաշար ստեղծելու գծով Հայաստանում մի շարք փորձեր են կատարվել նազարից շատ առաջ (նկատի ունենք «նշանագիրը իմաստնոցները»): Սակայն մեր սղագիրը հրաժարվել է դրանցից և նոր ձև է մշակել՝ փոխարինելով ամբողջական բառը որոշակի սղագրական նշանով: Նրա սխառմը, ինչպես արդեն ասել ենք, կազմված է երկու բաղկացուցիչ մասերից՝ տառի և բառի սղումից: Դրանք առանձին-առանձին կիրառվելով դարձյալ օգտակար կլինեին, բայց շատ ավելի շոշափելի արդյունք են տալիս միասնաբար կիրառվելիս, քանի որ տառի և բառի սղումները իրար հետ շաղկապված են, բերականական որոշակի սկզբունքներով և մեկի առավելությունը լրացնում է մյուսի թերությունը:

Հեղինակը առաջադրել է մոտ 1000 բառից կազմված մի բառարան, բաղկացած շատ հաճախ օգտագործվող, սովորելու և հիշելու համար հեշտ բառերից:

Սղագրական այդ բառարանում բառերը դասավորված են ըստ այբուբենի 38 տառերի (նե-րառյալ նաև օ և ֆ): Միջին հաշվով այբուբենի յուրաքանչյուր տառով նազարը տվել է շուրջ 25—30 բառ: Ավելի շատ են այն տառերով բառերը, որոնցով ընդհանրապես հայերենում ավելի շատ բառեր կան: Այսպես, ա-ի տառարաժնում կա 61 (46-ը բառարանի սկզբում և 15-ը վերջում) բառ, մինչդեռ ժ-ի տառարաժնում՝ 15, իսկ ռ-ի՝ 16 բառ և այլն: Ե և է ձայնավորների մասին հեղինակը գրում է. «Դարձնալ գիտելի է գի այրն յամենայն գրէ օգտի և է-ն եջին է օգնական, գի ամենայն պակասութիւն լցցի անտարակուսելի»¹⁵: Նա ե-ի տառարաժնում բերել է նաև է-ով սկսվող բառեր:

Ղ բաղաձայնի մասին հեղինակը գրում է. «Ե—զ (5—6) գիր կայ մեզ, որ ի մեր լեզուն իւրմովն բան չի կապեր զոր ինչ պիտոյ լինի քեզ. այսինքն ղ, ո, ր, ւ. վասն սոցա զայրն հաճարձակ արարաք ի վերա ամենայն գրի, գի այրն բազմարան է և իւրմովն միայն ոչ կարէ կատարել զպիտոյսն իւր...»¹⁶: Այս տառարաժնում ղ-ով սկսվող տառերի կողքին բերված են ե-ա-ով սկսվող այնպիսի բառեր, որտեղ բաղաձայն զ-ն ձայնավորի կողքին կարողանում է արտահայտել իր իսկական հնչյունը:

Նկատի ունենալով ո և օ տառերի հնչյունների որոշ նմանությունը, խախտելով այբուբենում տառերի դասավորության հաղորդականությունը, նազարը օ-ն տեղադրել է այբուբենի մեջ ո-ից անմիջապես հետո:

Հեղինակն իր բառարանում 1000 բառերի սղագրման համար ստեղծել է ընդամենը սղագրական 30 պարզ նշաններ: Հիշողությունը չժանրարեռնելու նպատակով՝ ամբողջական բառի փոխարեն վերցրել է սղագրվող բառի սկզբնատառը և վրան դրել սղագրման նշանը (տե՛ս բառարանը): Բառարանում օգտագործվել են նաև ձայնավորներին փոխարինող նշանները: Այստեղ արդեն շատ ցայտուն կերպով երևան է գալիս սղագրական երկու ձևերի միջև գոյություն ունեցող կապը: Բառարանում ձայնավորներին փոխարինող կետը, շեշտը և երկշեշտը դրվում են միմիայն ութ ձայնավորների վրա, արտահայտելով կրճատված բառի իմաստ, մինչդեռ բաղաձայնի վրա դրվելիս փոխարինում են սղված ձայնավորին: Սղագրական այս բառարանում տեղ են գտել խոսակցության, հաղորդակցության համար անհրաժեշտ, առօրյայում շատ հաճախ գործածվող գոյականներ, բայեր, մակբայներ, դերանուններ, ածականներ, թվականներ, նախդիրներ ու շաղկապներ: Պարզորոշություն մտցնելու նպատակով բառերը շատ դեպքերում բերված են նաև թերված ձևով: Այսպես, օրինակ.

ցուցական դերանուններ.

ս — այս

ս — այսորիկ

ս — այսուցիկ

ս — այսօրիկ

ն — այն

ն — այնորիկ

ն — այնուցիկ

ն — այնօրիկ

ի — ինքն

ի — ինքեան

ի — ինքնին

ի — իւրով

ի — իւրում

ի — իւրեանց

15 Նույն տեղում, էջ 10ա:

16 Նույն տեղում, էջ 9բ:

Նախդիրները բերված են ինչպես առանձին, այնպես էլ այլ խոսքի մասերի հետ օգտագործված: Այսպես.

Ճ - Տիէէէ	Շ - Շատ այն
Դ - Իբրէ	Շ - Շատ որին
Ը - Շատ	Շ - առ ինքն
Շ - Շնդ	Շ - առ որս
Շ - առ քեզ	Ի - Ի նմանէ
Յ - Յնա	Ի - Ի նոցանէ
Ի - Ի բւր	Ի - Ի վերա

Հետաքրքիր է և այն, որ օգտագործել է երկու բառից կազմված դարձվածքներ.

Ա - ապգէ յապ	Է - էրէկ և այսօր
Բ - բապում աւգամ	Տ - Տի առ աւգամ
Բ - բանից աւգամ	Ա - սարդի ուտաւ և այլն

Բառարանում տեղ են գտել ամբողջական բառերի փոխարեն որոշ բառերի հիմքեր առանց վերջավորությունների: Պետք է նկատել, որ այդ հանդամանքը պատահական չէ, քանի որ բերված հիմքերի մեծ մասից կազմվում են ոչ պակաս քան 10—50 տարբեր բառեր: Չմոռանանք նաև այն, որ որոշ վերջավորություններ ունեն իրենց սղագրական նշանները: Ստացվում է այնպես, որ փաստորեն առանց ծանրարեռնելու բառարանը՝ ավելանում է բառերի քանակը: Այսպես, հայտնի է, որ «բերկր» հիմքով կարող է կազմվել 20 բառ, կամ «զուարճ»-ով՝ 30—35 բառ, «ժամանա»-ով՝ 50, «արհմ»-ով՝ 30, «փրկ»-ով՝ 30 բառ և այլն:

Նազար սղագրի սխտեմում օգտագործված են նաև գաղափարագրեր ու նշանագրեր: Բառարանի վերջում բերված են շատ հաճախ օգտագործվող, բայց բառարանից դուրս մնացած բառեր, որոնք փոխարինված են գաղափարագրերով և նշանագրերով: Դրանց հիմքում ընկած են մոտ տասը նշանագրեր ու գաղափարագրեր: Սրանց վրա դնելով սղագրական նշանները, նազարը բառերի քանակը հասցրել է մոտ 70-ի:

Չեռագրում տեսական մասին հստակում է գործնական մասը, որտեղ հեղինակը տարբեր բնագրերից քաղված բավական մեծ հատվածներ սղագրել է իր սխտեմով: Օրինակները վերցրված են գիտության տարբեր բնագավառներից (աստվածաբանություն, տոմարագիտություն, տիեզերագիտություն, բժշկություն, նաև գուշակություններ և այլն), որպեսզի ցույց տրվի սխտեմի օգտակարությունը և կիրառելիությունը բոլորի համար:

Համեմատելով սղագրական հատվածներից որևէ մեկը սղագրական գրությամբ գրված նույն հատվածի հետ, տեսնում ենք, որ սղագրողը շահում է մոտ 60 տոկոսով, տնտեսելով և՛ տեղ, և՛ ժամանակ:

Չեռագրում լրիվ սղագրված հատվածների կողքին հանդիպում են և թերի սղագրված հատվածներ: Դա նույնպես կատարված է նախապես մտածված կերպով: Հեղինակը ցանկացել է ցույց տալ, որ եթե ոմանր դժվարանան այդ սմներ կիրառել ամբողջությամբ և հիշեն դրա մի մասը միայն, դրանից սղագրական սխտեմը ոչնչով չի տուժի, բայց սղագրողը դարձյալ կշահի:

Ստորև բերվում են նազարի սղագրական բառարանից մի քանի օրինակներ:

<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
անհետկալ	արժանաւոր	ապաւեն	անդադար	աղօթ
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
անբարիշտ	անբարոտաւան	ապաշաւ	անընգամ	անիրաւ
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
անտիւակալ	անուան	արջակետ	անբարոտաւաճ	անամա
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
անդաւանիկ	արեգակն	ապրեցոյ	այնպէս	այսպէս
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
անդամալուծ	աշխատող	ապականա	այնորիկ	այսորիկ
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
արժանի	անշուն	արքայ	աշէնդ	այնոցիկ
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
անարժան	անգետայ	աշխատ	ատելի	այնորիկ
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
այսոցիկ	անյիշատար	ապաւան	աւելու	ապաւան
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
այսորիկ	անհամարին	անդաւան	անհամարին	այգի
<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>	<u>ա</u>
առողջացոյ				

Ա. 7. I

<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>
իմաստուն	իրաւուն	իրաւել	իմաստ	իրաւան
<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>
իմանալի	իւրի	իմացել	իւրաւ	իմացիր
<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>
իմաստաւ	իւրեան	իւրեան	իւրեան	իւրեան
<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>
իմացարուք	իւրոյ	իւրոյ	իւրուն	իւրուն
<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>
իւր	իւրաւոր	իւրաւոր	իւր	իւր
<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>	<u>ի</u>
իւր	իւրեան	իւրեան	իւր	իւր

Ա. 7. II

<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>
Տրելուակ	Տեռաւոր	Տարկաւոր	Տանդերք	Տանգիստ
<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>
Տակառակ	Տերշուած	Տրապուր	Տալած	Տեւանդ
<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>
Տայրապետ	Տնալանդ	Տաւոռ յուծն	Տոգեոր	Տարուստ
<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>
Տանձարեղ	Տպարտ	Տրեայ	Տեօանոս	Տեռուստ
<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>	<u>Տ</u>
Տրեղէն	Տամարցակ	Տպարակ	Տամառօտ	
<u>Տ</u>	<u>Տ</u>			
Տոդեղէն	Տաստատ			

Աղ. III

<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>
Աստարագ	Աստուրի րան	Աստրաստ	Աստե րած	Աստասիւս նի
<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>
Աարտական	Աանդ ուիտ	Աատուան դան	Աատճառ	Աոռնիկ
<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>
Աահապան	Աարկեշտ	Ապերաիտ	Աարգե	Աահճատ
<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>
Աայծառ	Աատկեր	Աիղծ	Աատիժ	Աատու հաս
<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>		
Աատուա կան	Աատճու ճան	Ապիրատ		
<u>Ա</u>	<u>Ա</u>	<u>Ա</u>		
Աատառե	Աապանց	Աէս	Աէս	

Աղ. IV

<u>աւետարան</u>	<u>աւապակ</u>	<u>աժնէան</u>	<u>աժնէն</u> իւն	<u>աժէն</u>
<u>աներեւոյ</u>	<u>աներակ</u>	<u>աճարեկ</u>	<u>այլակերպ</u>	<u>արատա</u> ւոր
<u>աւապան</u>	<u>անարատ</u>	<u>աւետիք</u>	<u>առաքարեղ</u>	<u>ապարտան</u>
<u>աժնէայն</u>	<u>անարեւ</u>	<u>աներեւոյ</u>	<u>արտասու</u>	<u>ապարտաճ</u>
<u>անցեալ</u>	<u>անաչառ</u>	<u>աւետեաց</u>	<u>աճաւոր</u>	<u>արեւել</u>
<u>անցաւոր</u>	<u>անճաւատ</u>	<u>աւերեաց</u>	<u>աճարկու</u>	<u>արեւմտ</u>
<u>աւարտ</u>	<u>աճրացոյ</u>	<u>արիացոյ</u>	<u>արգաւիտ</u>	<u>անչափ</u>
<u>աւելորդ</u>	<u>ականատէս</u>	<u>աւանդ</u>	<u>արիական</u>	<u>ապշեցայ</u>
<u>աւ</u>	<u>աւ ւա</u>	<u>ապիւր</u>	<u>աճբիծ</u>	<u>արասցէ</u>
<u>անտէս</u>	<u>անարգ</u>	<u>աճափէն</u>	<u>ապաշխար</u>	<u>այսահար</u>
<u>արքունի</u> <u>կան</u>	<u>անճին</u>	<u>ակնարկ</u>		
<u>արասցուր</u>	<u>ապական</u>	<u>անասուն</u>		

Ջ	Ջ	Ջ	Օ	Օ
յաւիտեան	յաւիտեանս	յաւիտեն	աշխարհ	աշխարհա
	յաւիտենից	ից		կաւ
Ջ	Ջ	Ջ	Օի	Օֆ
յաւիտենա	յաւիտեան և	յաւիտենից	աշխարհի	աշխարհա
կաւ	յաւիտենից	յաւիտեաւ		կաւք
Օ	Օ	Օ	Օ	Օ
երկիր	երկրաւոր	երկին	երկնաւոր	երկնաւոր և
				երկրաւոր
Օի	Օյ	Օ	Օյ	Օյ
երկրի	երկրաւոր	երկնի	երկնաւոր	երկնաւորաց
	րաց		րաց	և երկրաւորաց
Օ	Օյ	Օյ	Օ	Օ
երկրաւոր և երկրաւորաց	երկնաւոր և երկնաւորաց	երկնից	արեգակն	լուսին
Օ	Օ	Օ	Օ	Օ
աստղ	աստեղ	աստղագետ	անդունդ	աստուած
Օ	Օյ	Օ	Օ	Օ
աստեղք	աստեղաց	աստղաբաշ	աճեալաւոր	արարիչ
Օ	Օ	Օ	Օ	Օ
աստուածա	աստուա	յիսուս	աստուծոյ	
պաշտ	ծաւծին			
Օ	Օ	Օ		
աստուած	արարած	քրիստոս		
ասէր				

Աղ. V

Չեղադրում սղագրված հատվածների կողքին կան պարզ համառոտագրություններով դրված հատվածներ: Նազար սղագրի նպատակն է եղել կոնկրետ օրինակներով ապացուցել իր սխտեմի առավելությունը ոչ միայն սովորական դրությունից, այլև հայ գրչության մեջ շատ առարածված համառոտագրման ձևերից: Համեմատելով դրանք իրար հետ հեղինակն ասում է. «Բայց ահա այս է նշանագիրն կատարեալ անթերի և անպակաս ի վերա այբուբենին դիւրագիտ, զոր արարի և արկի ի միջի ձերում վասն ձերս»¹⁷:

Նազար սղագրի այս սխտեմի գործնական կիրառության մասին առայժմ մեզ ոչինչ հայտնի չէ. չնայած դրան հայկական սղագրության պատմության մեջ նա մնում է, որպես հետաքրքիր մի օրինակ:

Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ